ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

(Ակադեմիկոս Սերգեյ Սարինյանի 80-ամյա հոբելյանի կապակցությամբ)

Գիտնականի և պոետի միջև փռված է կանաչ մարգագետին, կանցնի այն գիտնականը՝ կդառնա իմաստուն, կանցնի այն պոետը՝ կդառնա մարգարե:

ՋԵԲՐԱՆ

XX դ. 50–60-ական թվականներին գերիշխող էր ավելի վաղ տասնամյակներում սկզբնավորված գրականությունը և արվեստը գաղափարական գիտակցության առանձնահատուկ ձև դիտարկելու մտայնությունը: Պայքարելով իդեալիստական և դրապաշտական գեղագիտության գրականության գենեսիկական հիմքերը բացահայտող կենսագրական-հոգեբանական, կուլտուր-պատմական կամ հելլինակի ստեղծագործական ոգուց՝ սուբյեկտիվ սկզբից, ածանցող ինտուիտիվիստական դպրոցների սկզբունքների դեմ ու գրանք հռչակելով հակագիտական, մարքս-լենինյան փիլիսոփայությունը գրականությունը համարում էր գաղափարական գիտակցության և գաղափարախոսության սպեցիֆիկ ձև, ինչը ծագում և զարգանում է վերնաշենքային մյուս երևույթների հետ փոխկապակցված: Այդ ուսմունքի համատեքստում որոշարկված գեղագիտության համաձայն, գրականագիտության նպատակը համարվեց գրականության գենեզիսը գաղափարական կեցության և գիտակցության հիմքերին պատճառակցելը, վերջիններս համարելով սկզբնապատճառ և պայմանավորող արմատական գործոններ: Այսինքն՝ իրենց իսկ բանաձևումներով, հետազոտողն անհրաժեշտաբար պետք է բացահայտեր գրականության սոցիոլոգիական համարժեքը, այն է՝ ո՞ր դասակարգի գաղափարախոսության տենդենցների կրողն է տվյալ ստեղծագործությունը, կամ ինչպես ընդունված էր ասել, ո՞ր դասակարգի խոսափողն է գրողը, ո՞ր սոցիալական խմբի շահերն է կյանքի կոչում նրա ստեղծագործությունը: Ժամանակի գրականագիտությունը որդեգրելով այս բացարձակացված սկզբունքը,



սևեռված էր գեղարվեստական կառույցի և պատկերի բազմաբաղադրատարր հիմքերը և գենեզիսը հետևողականորեն հանգեցնելու կանխակալ գաղափարախոսայնության, դրանով իսկ նենգափոխելով ստեղծագործության առարկայական բովանդակությունը: Արվեստը ներկայացվում և իմաստավորվում էր «կուսակցականություն», «ժողովրդայնություն», «տենդենցիոզություն», «հակաբուրժուական ուղղվածություն» ունեցող գաղափարախոսականացված կարդերով, որոնք վերպատմական հայեցողականությամբ տարածվում էին նաև մշակույթի և պատմության նախորդ փուլերի վրա: Անցյալի գրականությունը նույնպես քննվում էր դասակարգային գիտակցության դիրքերից: Հասարակության խավերը, դասակարգերը ընկալվում էին մշտապես տրված և անփոփոխ հատկանիշներով, որի պատճառով կյանքի բոլոր երևույթները հանգեցվում էին վերջիններիս շահերին և պսիխոլոգիային: Այս ամենը լրացվում էր կոմունիզմի միֆի գիտականացմանն ուղեկցող վերացական հումանիզմի բարոյաբանությամբ:

Ըստ էության, այդ տասնամյակների գրականագիտական մեթոդը (որի վերապրուկները չարունակվեցին մասամբ նաև հետագա տասնամյակներում) համադրվել էր վուլգար սոցիոլոգիզմի համատեքստում և գործատարկանացվում էր հիմնականում միֆարնուլի գաղափարախոսության կարմակերտվածությամբ, ինչն իր հերթին իմաստով միտված էր համայնավարական համակարգի սոցիալական տիրապետող խավերի զանգվածների էմոցիաների և անգիտակցականի ռացիոնալացմանը և նորմավորմանը, հետևաբար գրականության վերլուծությունը միաժամանակ պետք է դառնար նաև գաղափարախոսական պայքարի ձևերից մեկը: Նույն ճակատագրին էին դատապարտված տնտեսական մատերիալիզմի և բուրժուական սոցիոլոգիական ուսմունքների որոշ ներթափանցումներ ժամանակի գրականագիտության համատեքստ, որոնք նենգափոխվելով ստանում էին խեղված իմաստ և բովանդակություն: Ըստ էության, ժամանակաշրջանի հասարակական գիտությունների մեթոդաբանությունը շնչում էր տիրապետող և պաշտոնական գաղափարախոսության գործարկվածության պտղով: Գրականությունը քաղաքական պայքարի զենք է, հետևաբար անխնա պայքար էր տարվում այն ապաքաղաքականացնելու ամեն մի մտադրության դեմ: Նշված գաղափարախոսական ենթատեքստ ունեցող գրականագիտության մեթոդաբանությունից ամբողջությամբ դուրս էր մղվել պատմականության (историзм) ըմբռնումը:

Խորհրդային առաջատար գրականագետների հետ Ս. Սարինյանին վիճակված էր նորարարի դեր և գործունեություն: Անհրաժեշտություն էր զգացվում նոր մեթոդաբանության մշակման դեռևս կենսունակ և գործուն գաղափարախոսության պարտադրումների մթնոլորտում: Գրականագիտական վերլուծություններում Ս. Սարինյանի որդեգրած և զարգացրած պատմատիպաբանական հետազոտական մեթոդի առանցքը պատմականությունն էր, ինչը լինելով զուտ գրական հետազոտական եղանակ, իրենով սկիզբ էր գնում մեղանում տվյալ դիսցիպլինի ապագաղափարախոսականացմանը (դեիդեոլոգիզացիա): Պատմականության կարգի ընդունումն արդեն առարկայականորեն ենթադրում էր գրականության պատմության նորովի հա-

մակարգում և դասակարգում այդ հիմքի վրա, բնականաբար, արժեքների վերարժեքավորում, կաղապարված նախապաշարումների հաղթահարում և նոր կարգահասկացութային եզրերի ձևավորում: Պատահական չէ, որ գեղարվեստական մեթոդների հստակ տարբերակումը, հայ նոր գրականության գիտական պարբերացումը սկսվեց Ս. Սարինյանի ուսումնասիրություններով: Հետևաբար, նրա գիտական ժառանգության արժեքը չի չափվում սոսկ գրականության պատմության կամ գրական երկի համակողմանի և մեծահմուտ հետազոտական յուրացմամբ, այլ, ինչն առավել քան կարևոր է ճանաչողության և պատմամշակութային առաջընթացի հարաբերությամբ, գրականագիտության հետազոտական մեթոդի գիտականացման հեղինակական և արդասավոր իրողությամբ, որի որոշարկման և համադրման ընթացքը ենթադրում է իմացաբանության միանգամայն այլ փիլիսոփայական հիմք և ասպիճան: Փիլիսոփայական և գիտական ճանաչողության պատմությունից հայտնի է, որ հետազոտական մեթոդի կատարելագործման առաջմղիչ ուժը ճշմարտության որոնման, էության խորքերը թափանցելու ոգու և մտքի հարատև մղվածությունն է, ինչն անհատի առանձնահատուկ բնական արվածք է և այլ կարգի իմացական կազմակերպվածության ներունակ հնարավորություն: Հավերժական շարժման և նորոգման տրամաբանությունը մշտապես թելադրում է հաղթահարել սկզբունքների և ըմբռնումների միակողմանիությունը, ձգտումը դեպի առաջ արտահայտվում է գոյություն ունեցողի հանդեպ անբավարարվածությամբ և այն նոր ձևերի որոնմամբ, կատարելագործմամբ, որոնք ավելի են համապատասխանում բանականության զարգացման նոր ասպիճանին: Ավանդական մտածողությունը առաջնորդվում է պատրաստի կարգերով, ըմբռնումներով, դործարկվում, սովորության ուժով, մինչդեռ նորի համար պահանջում է ներքին աշխատանք, զոհողություն, անհատականություն և ստեղծագործականություն: Անհատականություններին է լոկ վիճակված կյանքի կոչել նորը կեցության և իմացության բոլոր ոլորտներում:

Գիտությունը պատմամշակութային ամբողջի անքակտելի մասն է, այն դործառականացվում է նրա ծավալման տիրույթում: Վերջինս փոխլրացման սկզբունքով նպաստում է առաջինի գիտության, հետազոտական մեթոդի համադրմանը, ինչը կիրարկվելիս հետագարձ կապով հիմնարար նախադրյալներ է ստեղծում պատմական և մշակութային նոր արժեքային համատեքստի ձևավորման համար: Հետազոտական մեթոդի գերառույթը և դրա գիտականացման իրողությունը գնահատելի է որպես պատմամշակութային արժեք:

Ս. Սարինյանի հետազոտական մեթոդի տեսանկյունից գեղարվեստական մեթոդներն արդեն դիտվում են որպես գարաշրջանի անկրկնելիության և բազմաբազադրատարը բովանդակության գեղարվեստական փոխաձևություն: Վերջինս առարկայականորեն որոշարկող իր անհամասեռ հիմքի հետ պատճառահետևանքային կապակցվածության մեջ տեսնելու և այդ կերպ գեղարվեստական ֆենոմենը ճանաչելու միտքը հայ գիտնականի մտածողությանը և հետազոտական մեթոդին հաղորդում է ինքնատիպ սինկրետիզմ: Նրա գիտական, գրական մտածողության և հետազոտական մեթոդի մեծադույն նվաճումը դարձավ «Հայկական ռոմանտիզմ» պատ-

մագալափարական մեծածավալ ընդգրկում ունեցող հետազոտությունը: Այնուհետև մի շարք մենագրություններ (Ռաֆֆի, Մուրացան, Շանթ), բազմաթիվ տեսաքննադատական հոդվածներ, և վերջապես «Հայ գաղափարաբանություն» հիմնարար հետազոտությունը: Ըստ այդ բարձրարժեք աշխատության մեթոդաբանության, հայկական գաղափարաբանությունը ուսումնասիրվում և ներկայացվում է որպես պատմության ինքնաստեղծման ոգեղեն միջուկ, ոգու ինտենցիոնալ ինքնաստեղծում, գոյաբանություն, ինչը որոշարկվում է էթնոսի էությունից և փոխաձևվում քաղաքական և գեղարվեստական գոյաբանական իմաստ արտահայտող մշակույթի, էթնոսի կենսափիլիսոփայության: Ազգային գաղափարաբանությունը հարաբերական է ազգային ոգուն, ինչը իռացիոնալ է նախաստեղծ, անպիտակցական: Գաղափարախոսությունը երևութական է, այն ոգու արտածումն է գիտակցության մեջ, հետևաբար, նույնական չէ հասարակական գիտակցության, հասարակական ինչ-ինչ հոսանքների կամ կուսակցությունների քաղաքական ծրագրերին: Ս. Սարինյանի այս աշխատությունն առավել քան արժեքավոր է, քանի որ հայ գաղափարաբանությունը բացահայտվում է իր երկուհարյուրամյա դրական և քաղաքական մշակութային արտահայտությամբ, ինչը կարող է հիմնավորապես սնել հայ էթնոսը հետազոտող մարդաբանական, էթնոհոգեբանական և մշակութաբանական գիտությունները:

Ս. Սարինյանի մեթոդին բնութագրական է նաև գեղարվեստական իրականության մասնավորությունների մեծահմուտ հետազոտությունը, ինչը կազմակերպվում է նախորդ հետազոտության դպրոցների փորձի (կենսագրական-հոգեբանական, սոցիոլոգիական, կուլտուր-պատմական և այլն) և նոր տեսությունների ու գրական գիտությունների ուսումնառության համադրականությամբ: Քննախույզ թափանցումները, մասնավորությունների անսպառ և էմպիրիկ աշխարհը, նրա գիտական շարադրանքը հագեցնում են նորանոր գյուտերով և բացահայտումներով: Սակայն «ճշմարտությունը կենդանի է, ինչպես ամեն մի օրգանական կենդանի բան, բայց միայն որպես ամբողջություն, մասերի տրոհվելիս նրա հոգին թռչում է» (Գերցեն): Այստեղ հետազոտությունը կարող է մնալ լավ դիտարկված և ներկայացված մասնավորությունների մեխանիկական գումարի մակարդակում, եթե այն չուղեկցվի հետազոտության երկրորդ մակարդակի ունիվերսալացման իրողությամբ: Մասնավորությունները համակարգի և կենդանի ամբողջականության մեջ ճանաչելու մղումը Ս. Սարինյանի դիահետազոտական մեթոդը լրացնում է համակարգային վերլուծության և ֆունկցիոնալիզմի պոտենցիալ հնարավորություններով: Իր իսկ բնութագրմամբ՝ «գեղարվեստական մեթոդների տեսական և պատմական քննության հարցում ամենից արդյունավետ և հեռանկարային սկզբունքը երևույթների համակարգային ուսումնասիրությունն է»:

Սակայն գեղարվեստական իրականությունը կենդանի տրոփող իրողություն է նաև: Իսկ ճշմարտությունները, ինչպես նկատված է, ըմբռնվում են միայն կենդանի հոգով: Իմացության այս շերտը մեծացնում է ինքնամտածության, ինքնիմաց կամքի, անհատական բանականության իրավունքի գործակիցները գիտնականի ճանաչողության պրոցեսում: Հե-

տաղտուության ընթացքում Ս. Սարինյանի մտածողությանը և անհատականությանը ներհատուկ պոտենցիալը հետևողական թափանցումի մեջ է դեպի էության խորքերը, ձգտելով առավել ամբողջական ունիվերսալացման: Այստեղ միտքը տրվում է խորիմաստ հայեցողականության, որն ունի իդեալիզմի և մտքի բնաղանցական թռիչքի իր բաժինը, որտեղ գոյի իմաստի, հավերժականի և անցավորի, կյանքի և մահվան, ճակատագրի, իրերի և երևույթների սիներգիական սկզբի ու բնույթի փիլիսոփայական խոկումները օրգանապես ներառվում են գրականության կոնկրետ ֆենոմենի պրագմատիկ հեռանկարությանը:

Ինչպես ասված է՝ գիտական իմացությունը մտածող անհատի կեցության ոգսրումների հարաբերությամբ հաշտություն է կնքում Աստծո և աշխարհի, բնության և հոգու, բնական օրենքի և մարդկային աղատ կամքի միջև: Սակայն գոյի, կյանքի իմաստի և կոչվածության տիեզերասույզ խոկումներն անհատականացվում են նաև ճանաչող հոգու աշխարհազգացողության և կենսազգացողության չափումներով, ձևավորելով յուրահատուկ սոլիպսիզմ, ուր ճշմարտությունն էությունն չէ հենց այնպես, այլ անհատականորեն իմացված էությունն: Հենց այս հատման կետում են աշխարհի հանդեպ նոր հայացքով հանդիսանում 60-ամյա գիտական մարաթոն անցած գիտնականն՝ ու պոետը, և հենց այս ոլորտում է հոգու ճանաչողությունը հաղթահարում կեցության առօրեականությունը և համադրում է իր բնաղանցությունը՝ անցավորի հետ հաշտության դաշն կնքած իմաստուն և անվրդով խաղաղությամբ:

ԱՐԱՄ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ